ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/31148-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1073-14.05.2025-ԱՌՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար: 1.

Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում (լրամշակված նախագծի 2-րդ հոդված) «1-ին մասի 1-ին նախադասությունում» բառերը փոխարինել «1-ին մասում» բառերով:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով լրացվող դրույթները առաջարկվում է սահմանել մեկ կետի տեսքով, միևնույն ժամանակ առաջարկվում է նշված կետերով նախատեսված կարգավորումները համարակալել մասերի տեսքով, իսկ նախագծի հիշյալ կետերում օգտագործվող «երրորդ նախադասությունով» և «չորրորդ և հինգերորդ նախադասություններով» բառերը առաջարկվում է փոխարինել «1.1-1.3-րդ մասերով» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:»:

Առաջարկվող փոփոխությունների համատեքստում առաջարկվում է փոփոխել լրամշակված նախագծի 2-րդ հոդվածի համարակալումը, ինչպես նաև լրամշակված նախագծի 3-րդ հոդվածում «1-ին հոդվածի 3-րդ կետի, որը» բառերը փոխարինել «2-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 1.2-րդ եւ 1.3-րդ մասերի, որոնք» բառերով:

2. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետում (լրամշակված նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ) «լիցենզիան» բառը փոխարինել «լիցենզիայի գործողությունը» բառերով հաշվի առնելով այն, որ «Լիցենզավորման մասին» օրենքով կիրառվում է վերոնշյալ հասկացությունը:

3. Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի (լրամշակված նախագծի 3-րդ հոդված) «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ